

ՀՏԴ՝ 81.19

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՄԱԿԱՆ ԱՐԴԻ
ԽՈՍՎԱԾՔԻ ԴԱՐՉՎԱԾՍՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ
Սուսաննա ԶԱՔԱՐՅԱՆ

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Բանալի բառեր՝ ազգային լեզվամտածողություն, համատեքստ, լեզվական և արտալեզվական գործոններ, արաբական, թուրք-թաթարական, պարսկական ազդեցություններ:

Աշխատանքում անդրադարձ է կատարվում Գյումրու արդի խոսվածքում նկատելի շերտ կազմող, արևելյան լեզուներից կատարված բանավոր փոխառություններին, որոնք խոսվածք մտած այլ անհարկի փոխառությունների, նաև մերժելի լեզվական դրսևորումների հետ միասին անցանկալի հետք են թողնում սերունդների ազգային լեզվամտածողության վրա:

Լեզվի բառապաշարը լեզվական և արտալեզվական գործոնների հանդեպ իր զգայունությամբ՝ առավել ենթակա է օտար ազդեցությունների, որոնցից շատերի՝ բազմաթիվ բառերի ու արտահայտությունների սոսկ թվարկումը բավական է բացահայտելու մեր ժողովրդի ճակատագրի վրա արաբական, թուրք-թաթարական, պարսկական ազդեցությունների բնույթը և հետևանքները:

Անառարկելի ճշմարտություն է այն, որ «ամենամեծ քերականագետը ժողովուրդն է», և նրա անադարտ լեզվամտածողությունը ազգապահպան արժեք ունի: Այս համատեքստում հեղինակն ավելի վաղ առանձին հոդվածով անդրադարձել է խոսվածքում արևելյան

բառային փոխառությունների խնդրին:¹ Սույն հոդվածում քննության են առնվում փոխառյալ բաղադրիչ ունեցող կամ ամբողջապես փոխառյալ դարձվածային միավորներն ու արտահայտությունները, որոնց մի ստվար մասը, շնորհիվ հաճախակի գործածության, դրսևորում է խոսվածքում դեռևս «երկար կյանք» ունենալու առանձնահատկություն, ավելին՝ ձեռք է բերել հանրային մտածողությանը հարազատ նրբիմաստներ:

Նախաբան. Դարձվածքները, առած-ասացվածքները, ժողովրդական իմաստախոսությունները սեղմ և պատկերավոր ոճով արտահայտում են ժողովրդի կենցաղը, սովորույթները, նրա դավանած մշակութային արժեքները, հոգեբանությունը, երազանքները և ընդհանրապես՝ պատմական ճանապարհը, հետևաբար նրանք «ձևավորվել են հայերենի պատմության ողջ ընթացքում՝ պատմական տվյալ պայմաններից կախված ուժեղանալով, թուլանալով կամ նույնիսկ ընդհատվելով»:² Ժողովրդական մտածողության բյուրեղացած այս ձևերում «միջազգային բառարանի»³ (Հր. Աճառյանի բնութագրմամբ) շատ բառեր նշույթավորվելով պահպանվել են նաև այն դեպքերում, երբ սերնդափոխության, բնակչության տեղաշարժի, ներգաղթ-արտագաղթի, վերջին տասնամյակներում նաև երկրաշարժի պատճառով հետևանքներով պայմանավորված՝ ազատ բառերը պակասել կամ դուրս են եկել խոսվածքից: Որպես պատրաստի վերարտադրվող լեզվական իրականություններ՝ նրանք անընդհատ կիրառվում են՝ դրանով «ապահովելով» նաև իրենցում առկա օտար բառերի երկարակեցությունը: Միտքը դիպուկ արտահայտելու և լեզվական խնայողության նպատակով գործածվող շատ դարձվածքներ անցել են սերնդեսերունդ և այսօր էլ գործածվում են, ինչպես՝ *ջանը դուրս գալ, ո՛չ շատին, ո՛չ խերին, նաֆաս առնել, յախա թափ տալ, յախեն բռնել* և այլն: Իրադրությունը, մարդկային փոխհարաբերությունները մեկնաբանելիս հիշվածները գործածվում են բնական, կենդանի խոսք կառուցելու միտումով:⁴ *Ոտքը յորդանի չափ պարզել, խաթրից դուրս գալ, դժի թևով, քոռ կոպեկ, փոր ու փոշման, նամուսի գերի, նամուսի մեռած, սամթը առնել, սաղ-սաղ թաղել* և բազ-

¹ **Խաչատրյան Մ.Կ., Զաքարյան Ս. Հ.** Արևելյան լեզուներից կատարված բանավոր փոխառությունները Գյումրու խոսվածքում, // ՇՊՀ «Գիտական տեղեկագիր», հ.1, պրակ Բ, Գյումրի, 2018, էջ 57-69:

² **Զահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1992, էջ 347:

³ **Աճառյան Հր. Հ.**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951 էջ 118:

⁴ Տե՛ս նաև **Հայրապետյան Ս. Ա.**, Գյումրու արդի խոսվածքը, // «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային ութերորդ գիտաժողովի նյութեր, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2010, էջ 278:

մաթիվ այլ դարձվածքներ առայժմ բնութագրական են ոչ միայն ավագ և ավագագույն, այլև միջին, նույնիսկ երիտասարդ սերնդի լեզվին: Ինչպես երևում է օրինակներից, դարձվածքները և՛ երկբաղադրյալ են, և՛ բազմաբաղադրյալ, հաճախադեպ են թե՛ բայական, թե՛ անվանական դարձվածքների գործածությունները: Իսկ *խոսք ու խորաթեն տեղը* դարձվածքը, որ դարձյալ շատ գործածական է, ունի *համով խոսող, հասկացող, բանհմաց* նրբերանգները: Բնութագրական խոսքի մեջ այս դարձվածքը առայժմ տեղը չի զիջում նշված ոչ մի բառի, օրինակ՝ որևէ բառով չի փոխարինվում *հալյալ-գուլյալ ախպեր* դրական իմաստ ունեցող դարձվածքը: *Հալյալ* բառը *դարդ* բառի նման «քաղաքացիություն» է ստացել Կարնո բարբառում, և ոչ ոք *դարդ ու ցավ* դարձվածքի մեջ օտար երանգ չի նկատում, այդպես էլ *դարման ու ճար, շառ ու ցավ, կռիվ-դավմադալ /էնել/, սուտ ու դորթ խոսել, սաղ-սալամաթ/գալ/* և այլն:

Կարեկցանք, անհանգստություն, նվիրվածություն և նման ու մոտ հարիմաստները գյումրեցին արտահայտում է պատրաստի լեզվամիջոցներով՝ խոսուն, տարողունակ դարձվածքով, որով և ապահովվում է խոսքի սեղմությունը, ինչպես՝ *կաթի գյորա* /ամեն մարդ իր կերած կաթի գյորա/: Շատ գործածական են և դիպուկ նաև *ջիգրի մրմուռ* /ջիգրի մրմուռ չտեսնիս/, *ջիգրին ջումարտություն* *չկա* /հարազատի համար ամեն ինչի պատրաստ/, այդպես էլ՝ *դարդ ու բալա* է շատ կենսունակ դարձվածքները: Այդպիսի ընդհանրացում ունեն բացասական հարիմաստ արտահայտող *դալպ մարդ, հարամ կաթ* և նման դարձվածքները, որոնց գործածությունն առայժմ սահմանափակված չէ:

Բառապաշարի անբաժանելի բաղադրիչներ են օրհնանքները, անեծքները, որոնց կազմում նշույթավորված են արևելյան փոխառյալ բառերը, ինչպես՝ *ջանդ սաղ, բոյ ու բուսատդ մեռնի, նալլաթ չար սատանին, թարսի պես, դուշմանի աչքը հանել* և այլն:

Ընդգծված գործածություն ունի հասարակաբանական-խոսակցական շերտը, որը քիչ բառերով վերաբերմունք արտահայտելու միջոց է, ինչպես՝ *բոշեն՝ փաշա, ծակ բողագ, հարամ գաղե* և այլն:

Հայտնի է, որ դարձվածքները հասկացություն են արտահայտում, սակայն շատ կարևոր է նրանց՝ այս կամ այն վերաբերմունքն արտահայտելու առանձնահատկությունը, որը հուզաարտահայտչական իր դերով բնութագրական է բանավոր խոսքին, մասնավորապես՝ բարբառներին, եթե հատկապես մեր քննարկած խնդրին՝ բանավոր փոխառություններին են առնչվում: Ինչպես նշեցինք, արևելյան լեզուներից փոխառված վերոբերյալ բառերը, դարձվածքներում նշույթավորվելով, ապրում են ժողովրդական լեզվամտածողության մեջ: Օրինակ՝ խնդրո առարկա խոսվածքում բավական շատ են տարբեր վերաբերմունք

(դրական, բացասական, ընդհանուր)⁵ արտահայտող դարձվածքները, որոնցում առկա օտար բառերը խոսողության ընթացքում չեն էլ գիտակցվում որպես այդպիսիք, օրինակ՝ *հայիլ-մայիլ մնալ, հուրի-մալաք, խաս թիքա, ջան ու դուրբան էնել, սեր ու սավդա գցել, ինչ խաբար է* և այլն, որ արտահայտում են հաճելի ապրումներ, հիացական վերաբերմունք և անպակաս են առտնին հարաբերություններում շփումների լեզվից⁶: Այդպես էլ նվիրվածություն և մեծ սեր են արտահայտում *դուրբանդ էղնիմ, փայ ու բաժինդ մեծ էղնի, գլխիդ դուրբան, դաղեղ տանիմ* և նման այլ վերաբերական դարձվածքներ: Գյումրու բարբառակիր բոլոր հասակներն էլ գործածում են, օրինակ՝ *դաղորդ իմանալ* (արժանիքը, նշանակությունը գնահատել) դարձվածքը, որը խոսքի ինքնընթացության օրենքով անընդմեջ գործածվել է, և չի նկատվում պակասելու միտում: Այդպես էլ *խոսք ու խորաթա* դարձվածքը, որ նշանակում է *տարաձայնություն, դժգոհություն* և առայժմ գերակշիռ գործածություն ունի: Պետք է նշել, որ հաճախ գործածվում է նաև *խոսխորաթա*:

Բոլորին է հայտնի, որ բառերի կյանքը պայմանավորված է գործածությամբ, իսկ նշված բառերը դեռևս խիստ հաճախադեպ են, քանի որ ձեռք են բերել հանրության մտածողությունն արտահայտող նրբիմաստներ և շարունակում են մնալ այդ հատկանիշի կրողները: Այդպես է ընդհանրապես, սակայն սերնդափոխությունն իր հետ բերում է որոշակի փոփոխություններ, որոնք նկատելի են նաև Գյումրու խոսվածքում: Եթե ավագագույն և ավագ սերունդները մեծ հաճախականությամբ էին գործածում առած-ասացվածքները, ապա այսօր նույն միտումը չկա: Շատ առածներ այլևս չեն գործածվում կամ սակավադեպ են դարձել, օրինակ՝ *Քաստանից* է դուրս եկել, կպեճին չի հավնի: Գլուխդ ներս չհավքած տեղը, *ջանդ* ներս մի՛ տանի: *Առսըզ իսանը* շատ կապրի: *Նամարդի* հացը չի ուտվի և այլն: Դեռ գործածվում են որոշ առած-ասացվածքներ ավագ սերնդի խոսքում, ինչպես՝ *Հարամը քինա չի բռնե: Սաղ մորս հալը կհարցնեն... Օղորթ* խոսողի ձին դուռն է: *Յա* գժի հետ խոսել ես, *յա* գարի հաց կերել ես: *Հալալին* աստված կուտա, *հարամին*՝ սատանեն և այլն:

Օտար բառերի գործածության հարցը տարակարծությունների տեղիք է տվել: Սակայն ուզում ենք առանձնապես հիշել Վ. Կատվայանի բնութագրումը: Նա գրել է. «Բարբառը, ինչպես և գրական լեզուն, լեզվական համակարգ է, այն մաքուր կամ անմաքուր լինել չի կարող»⁷: Սակայն լեզվաբանը տողատակում

⁵ Մելքոնյան Ս.Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 195:

⁶ Այդ մասին տե՛ս նաև **Հայրապետյան Ս.Ա.**, Խոսվածքի երեկն ու այսօրը, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.14, «Գիտություն» հրատ., Գյումրի, 2011, էջ 71-79:

⁷ Կատվայան Վ., Հայ բարբառագիտության հարցեր, Եր., 2014, էջ 26:

հղում է անում. «Գրական լեզվի կամ որևէ բարբառի մաքրության ցուցանիշ թերևս կարող է լինել միայն օտար անհարկի փոխառությունների սակավությունը»⁸: Լեզվաբանը միանգամայն իրավացի է:

Առածներն ու ասացվածքները, թևավոր խոսքերը ոչ միայն պատկերավոր մտածողության միջոցներ ու ձևեր են, այլև օժտված են դաստիարակչական արժեքով, ուստի նրանց գործածությունը սերնդից սերունդ է անցնում որպես խրատ, որպես դաս: Այսպիսով՝ ապրում են նաև արևելյան լեզուներից անցած բառերը՝ շարունակելով ընկալվել որպես բարբառի անբաժանելի լեզվական բաղադրիչներ, ինչպես՝ *Հոր տան խերին մեռնիմ*, Մեյդանիդ գյորա *ձիդ քշե: Ձուկը ծովը բազար չեն էնե: Ուրիշին տնազ էրի, գլուխս էլավ: Քոռն ինչ գուգե՝ ջուխտմ աչք: Հալալն օր մազ էղնի, չի կտրի, հարամն օր գերան էղնի, կկտորվի: Կան նաև միայն փոխառյալ բաղադրիչներով կազմված ասացվածքներ, ինչպես՝ *Բոլ է փարեն, կսաղցնե յարեն: Հալալ գաղեն կշինե յոլ ու դայդա* և այլն:*

Ավագ սերունդը նույն նշանակությամբ գործածում է *ումուդ-գյուման*, միջին սերունդը՝ *հույս ու գյուման* դարձվածքը, որը երբեմն բայական դարձվածքի ձևով է գործածվում՝ *ումուդ-գյումանիդ մեռնիմ*: Դրական իմաստ արտահայտող դարձվածքներից ամենահաճախ գործածություն ունեցողներից է *խաթը պահել*, որի գործածության հաճախականությունը նվազման միտում դեռևս չունի: Անեծքներից տակավին գործածական են *մուրագը փորդ մնա, քոքը կտրի, ազիզը թաղել*, վերաբերմունքային *նալլաթ չար սատանին* կայուն կապակցությունները: Գործածական են հեգնական, երգիծական *լամանն է, քիրդան խանում, ոտքեն չափուկ, լայեղ/խ/ էնել* կապակցությունները, արհամարհական՝ *դասաբխանի շան պես դողալ*, գայրույթի աստիճանը բացահայտող՝ *գլխի դապաղը ժաժ գալ*, վիշտ ու կարեկցանք արտահայտող՝ *գլխին գուլում գալ* դարձվածքները:

Ավագ սերունդը հավասարապես գործածել է *գլխին դալլարություն սովորել* և *բեղովլաթ գավակ* դարձվածքները: Առաջինն անհմուտ մարդկանց մասին է, որոնք անձանոթ գործի մեջ ուզում են փորձառություն ձեռք բերել: Դիպուկ է, սակայն դուրս է եկել խոսքից գոնե երիտասարդ սերնդի շրջանակներում, մինչդեռ երկրորդը չի ընկալվում *բեղովլաթ* բառի *ունեգուրկ* առաջնային իմաստով, այլ *անառակ գավակ* նշանակությամբ, որով և շարունակում է հաճախակի կիրառվել:

Եզրահանգում. Ելնելով վերոշարադրյալ կարծիքների համադրումներից՝ Գյումրու խոսվածքի վրա արաբական, թուրք-թաթարական, պարսկական («միջազգային բառարան»)՝ այսօր էլ դեռ զգալի ազդեցությունները վկայող ժողո-

⁸ Նույնը:

վրդական լեզվամտածողության միջոցների փաստական նյութի վերլուծություններից՝ գալիս ենք հետևության, որ կյանքի զարգացմանը զուգընթաց՝ էական տեղաշարժեր կատարվել են նշված բառարանի բառերի գործածության տարբեր ոլորտներում (կենցաղային և այլնայլ հարաբերություններ արտահայտող սուպարեզներ), սակայն ժողովրդական լեզվամտածողության միջոցները՝ դարձվածքներ, առած-ասացվածքներ, իմաստախոսություններ և այլն, նշույթավորման հետևանքով բյուրեղացած պահում են իրենց կազմում նշված բառերը, որոնք վերաիմաստավորվելով շարունակում են էական դեր կատարել բանավոր հաղորդակցության ոլորտում:

ВОСТОЧНЫЕ ЗАИМСТВОВАНИЯ ВО ФРАЗЕОЛОГИЗМАХ СОВРЕМЕННОГО ГЮМЕЙСКОГО ГОВОРА

Закарян С. Г.

Ключевые слова: *национальное языковое мышление, контекст, языковые факторы, арабское, турецко-татарское, персидские влияния.*

В работе мы обращаемся к устным заимствованиям из восточных языков, занимающих заметный слой в разговорной речи Гюмри. Они вошли в разговорную речь с остальными непристойными выражениями и оставляют нежелательные последствия на языковое мышление поколений. Вспомним, что «самый большой грамматист—это народ», и его чистое языковое мышление имеет национальную ценность. Ранее, отдельными статьями мы обращались к заимствованиям и отмечали, что лексика народа, являясь уязвимой по отношению к языковым и внеязыковым факторам, больше всех повержена иностранному влиянию. Только перечисление этих слов и выражений выявляет влияние и последствия арабского, турецко-татарского, персидского языков на судьбу нашего народа.

EASTERN BORROWINGS IN THE PHRASCOLOGICAL UNITS OF GYUMRI'S MODERN SPEECH

Zakaryan S. H.

Key words: *borrowing, oriental languages, Gyumri modern speech, national linguistic thinking, context, linguistic and extracurricular factors, Arabic, Turkish-Tatar, Persian influences.*

In the work we refer to the colloquial borrowings from Eastern languages occupying a noticeable layer in the colloquial speech of Gyumri; they entered into the conversational speech with the rest of obscene expressions and left undesirable

consequences on the language thinking of generations. Let us remember that the “biggest grammarian is the nation” and his pure language thinking is of great value. In our earlier articles we have dwelt upon the borrowings and mentioned that the vocabulary of the people, being vulnerable to linguistic and non-linguistic factors, is most of all defeated by foreign influence. Only the enumeration of these words and expressions reveals the influence and consequences on the fate of our people of the Arab, Turkish, Tatar, Persian languages. Phraseological units, proverbs, folk wisdom briefly and vividly represent the everyday habits of the people, the confession of cultural values, psychology, dreams and the historical path in general, therefore, they “formed in the whole history of Armenia depending on these historical conditions, increasing, weakening or even interrupting”.

Everyone knows that the “life” of words is due to the use, and the words mentioned are still used, since they have acquired the expression of the thinking of society and remains as the carriers of these features.

References

1. **Acharyan Hr. H.** Hajoc lezvi patmuthyun. masn II, Yerevan, 1951 (**In Armenian**).
2. **Hayrapetyan S. A.** Khosvatsqi yerekn u ajsor@, //HH GAA Shiraki hajagitakan hetazotuthyunneri kentroni Gitakan ashkhatuthyunner, h.14, Gituthyun hrat., Gyumri, 2011, eg 71-79 (**In Armenian**).
3. **Hayrapetyan S. A.** Gyumru ardi khosvats@, //«Shiraki patmamshakuthayin jarangutyun@» mig'azgayin utherord gitajoghovi nyuther, Gituthyun hrat., Gyumri, 2010 (**In Armenian**).
4. **Jahukyan G. B.** Hay barbaraituthyan neratsuthyun, Yerevan, 1992 (**In Armenian**).
5. **Katavalyan V.** Hay barbaragituthyan harcer, Yerevan, 2014 (**In Armenian**).
6. **Khachatryan M. K., Zakaryan S. H.** Arevelyan lezunerik katarvats banavor phoxarut-hyunner@ Gyumrii xosvatsqum, //SHPH Gitakan tekhekagir, No.1, Prak B, Gyumri, 2018, eg 57-69 (**In Armenian**).
7. **Melkonyan S. A.** Aknarkner hayoc lezvi voch'abanuthyan, Yerevan, 1984 (**In Armenian**).
8. **Mkrtchyan H.** Karno barbar@, Yerevan, 1957 (**In Armenian**).

Ընդունվել է՝ 13. 06. 2020
Գրախոսվել է՝ 11. 08. 2020
Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Մուսաննա ՉԱՔԱՐՅԱՆ՝ բանասիրական գիտությունների թեկնածու, Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի հայոց լեզվի և հայ գրականության ամբիոնի դոցենտ, էլ.հասցե՝ zakaryansusan@mail.ru

